Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
հուլիսի 19-ի N 916 - Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՋԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԻ ՄԱՍՆԱՎՈՐ (ՈՉ ՊԵՏԱԿԱՆ) ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ՇԵՆՔԻ ՔԱՆԴՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Տրամադրվելիք տարածքների հատկանիշները

NN ը/կ	Իրավատիրոջ անվանումը	ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 7-ի N 232-Ա որոշման հիման վրա կնքված խառը պայմանագրի ամսաթիվը	Վերցված տարածքի մակերեսը (քառ. մ)	Տրամադրվելիք տարածքի հարկը, մոտավոր մակերեսը՝ նախագծային միավորի արտաքին չափերով (քառ. մ)
1.	«Եվրոպական բժշկական կենտրոն» ՍՊԸ	19.03.2012 թ.	487,25	766, որից 1-ին հարկում՝ 112
2.	«Լևոն-1» ՍՊԸ	19.03.2012 թ.	101,7	216, որից 1-ին հարկում՝ 23,5
3.	«Անժելա-91» ՍՊԸ	19.03.2012 թ.	303,5	350, որից 1-ին հարկում՝ 70
4	«Արևիկ հուշանվեր» ՍՊԸ	19.03.2012 թ.	94,5	105, որից 1-ին հարկում՝ 22
5.	«Պողոսյան Սրահ» ՍՊԸ	19.03.2012 թ.	230,5	255, որից 1-ին հարկում՝ 53
6.	Ռազմիկ Ծառուկյան	19.03.2012 թ.	201	250, որից 1-ին հարկում՝ 46,5
7.	Անժելա Ստեփանյան	19.03.2012 թ.	31,5	65, որից 1-ին հարկում՝ 8
	Ընդամենը		1455,95	2007, որից 1-ին հարկում՝ 335

2. Սեփականության իրավունքով տրամադրվող տարածքի օտարման գինը պետք է որոշվի 1 քառ. մետրը՝ 100 դրամ հաշվարկով: Օտարման գործարքից ծագող ավելացված արժեքի հարկը հաշվարկվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ որպես Հայաս-

տանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 19-ի N 916 - Ա որոշման հիմքով իրականացվող մասնակի հատուցմամբ օտարում:

3. Տարածքը տրամադրվում է արտաքին լուսամուտները տեղադրված վիճակում, առանց ներքին հարդարման, ընդհանուր կոմունիկացիաների, ընդհանուր օգտագործման տարածքներում՝ աստիճանավանդակների և վերելակային համակարգի առկայությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ